

Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ  
Խորհրդի նիստի  
Թիվ 18 որոշմամբ առ 25.06.2010թ.

Խորհրդի Նախագահ  
Գագիկ Զաքարյան

---

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ (ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ)  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Նոր խմբագրություն)

## **Բովանդակություն**

1. Ապահովագրության Պայմաններում կիրառվող հիմնական հասկացությունները
2. Տրամադրվող ծառայություններ
3. Ապահովագրության Պայմանագրի կնքման կարգը
4. Ապահովագրության Պայմանագրի գործողությունը
5. Ապահովագրական գումար, Ապահովագրավճար
6. Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսեր
7. Բացառություններ
8. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում կողմերի փոխհարաբերությունները
9. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները
10. Ապահովագրության Պայմանագրի դադարեցումը և վաղաժամկետ լուծման կարգը
11. Վեճերի լուծման կարգը
12. Այլ պայմաններ
13. Աջակցության ապահովագրության ծրագրեր

ՀՀ և ԼՂՀ տարածքից դուրս (այսուհետ՝ Արտասահման) ճանապարհորդության մեջ գտնվող անձանց (Աջակցության) ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) կազմված են ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան և հանդիսանում են ճանապարհորդության մեջ գտնվող անձանց (աջակցության) ապահովագրության Պայմանագրի անբաժանելի մասը: Ապահովագրության Պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ դրույթներ:

### **1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ապահովագրող՝ «ՌԵՍՈ»** Ապահովագրական ՓԲԸ:

**Ապահովադիր՝** գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ապահովագրողի հետ կնքել է ապահովագրության Պայմանագիր և/կամ Վկայագիր (այսուհետ՝ Պայմանագիր): **Ապահովագրված անձ՝** Պայմանագրում նշված անձ, որի հետ կապված Ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Պայմանագրում Ապահովագրված անձ նշված չլինելու դեպքում Ապահովադիրը հանդիսանում է Ապահովագրված անձ: Որպես Ապահովագրված անձ կարող են հանդես գալ Արտասահման ուղևորության մեկնող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց տարիքը Ապահովագրության Պայմանագրի կնքման պահին չի գերազանցում 75 տարին: Որպես Ապահովագրված անձ չի կարող հանդես գալ այն պետության քաղաքացին, որի տարածքում կատարվում է ճանապարհորդությունը, ինչպես նաև այդ պետությունում առավելապես բնակվող և/կամ կենսական շահերի կենտրոն ունեցող անձը: Ապահովագրված անձը հանդիսանում է Շահառու, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

**Ապահովագրության օբյեկտ՝** Ապահովագրված անձի գույքային և անձնական շահերը Պայմանագրում նշված պետության կամ պետությունների տարածքում գտնվելու ընթացքում, որոնք կապված են ճանապարհորդության ընթացքում Ապահովագրված անձի կրած ծախսերի և վնասների հատուցման հետ:

**Մաասարկող ընկերություն՝** (Ապահովադրի օգտին ծառայությունների իրականացումն ապահովող ընկերություններ) Ապահովագրված անձի այցելության երկրի օրենսդրության համաձայն գործող կազմակերպություններ, որոնք ունեն պայմանագիր Ապահովագրողի հետ՝

կապված բժշկական, բուժատրանսպորտային ծառայությունների, էվակուացիայի, հայրենադարձման և այլ ծառայությունների մատուցման համար:

**Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:

**Ապահովագրավճար՝** ապահովագրության Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարվելիք գումար:

**Ապահովագրական պատահար՝** Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում իրականացնելու պարտավորությունը:

**Ապահովագրական հատուցում՝** ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա գումար:

**Ոչ պայմանական չհատուցվող գումար՝** Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

**Հարազատներ՝** հայր, մայր, երեխա, օրինական ամուսին կամ կին, քույր, եղբայր:

**Դժբախտ պատահար՝** Ապահովագրված անձի հետ կատարված ցանկացած հանկարծակի և անսպասելի պատահար, որին հետևել են մարմնական վնասվածքներ՝ բացառությամբ ինքն իրեն կանխամտածված վնաս պատճառելու դեպքի:

**Մարմնական վնասվածքներ՝** վնասվածքներ՝ անձի առողջության կամ մարմնի ամբողջականության խախտմամբ, որոնք պահանջում են հոսպիտալացում կամ բժշկների կողմից իրականացվող բուժում:

**Հիվանդություն՝** հանկարծակի և անսպասելի հիվանդություն, որն այնպիսի ծախսեր է առաջացրել, որոնց հատուցումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

**Մարդկային կյանքի սպառնալիք՝** Մարմնական վնասվածքներ կամ հիվանդություն, որին հետևում է մահը՝ ոչ ժամանակին ցուցաբերված բուժօգնության հետևանքով:

**Սուբրոզացիա՝** Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին կամ Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող վնաս պատճառած անձի նկատմամբ նրանց պահանջի իրավունքի փոխանցումը Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով:

## 2. ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն կետով նախատեսված ծառայությունների իմաստով Ապահովագրական պատահարներ են համարվում՝ Ապահովագրված անձի հանկարծակի հիվանդությունը, դժբախտ պատահարը, ինչպես նաև մահը, այն պայմանով, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել Ապահովագրված անձի Պայմանագրում նշված պետության տարածքում գտնվելու ժամանակ՝ Պայմանագրի գործողության ընթացքում:

### 2.1. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

2.1.1. Ապահովագրողը երաշխավորում է շտապ, անհրաժեշտ և նպատակային բժշկական, հիվանդանոցային և վիրաբուժական ծառայությունների վճարում, որոնք մատուցվել են Ապահովագրված անձին բժշկի կարգադրությամբ՝ դժբախտ պատահարի հետևանքով ստացված մարմնական վնասվածքների, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում հանկարծակի և անսպասելի պատահած հիվանդության բուժման նպատակով:

2.1.2. Ապահովագրողը պատասխանատու է բուժհաստատության կամ բուժող բժշկի կողմից ներկայացված հաշիվների վճարման համար՝ ապահովագրական գումարի սահմաններում: Ծախսերի վճարումը կարող է իրականացվել.

ա) անմիջապես Սպասարկող ընկերության կողմից՝ բուժհաստատությանը կամ բուժող բժշկին (առանց Ապահովադրի մասնակցության),

բ) անմիջապես Ապահովադրի կողմից՝ բուժհաստատությանը կամ բուժող բժշկին՝ Ապահովագրողի կողմից ծախսերի հետագա հատուցման պայմանով:

2.1.3. Այն ծախսերը, որոնք Ապահովադիրն իրականացրել է՝ տեղեկացնելով Մպասարկող ընկերությանը, հատուցվում են կամ Մպասարկող ընկերության ներկայացուցչության երկրում, կամ Ապահովագրողի կողմից՝ մշտական բնակության երկրում:

2.1.4. Հատուցումը ստանալու համար Ապահովադիրը պարտավորվում է ներկայացնել ապահովագրական պատահարի հետ կապված բոլոր փաստաթղթերը, որոնք կպահանջի Մպասարկող ընկերությունը կամ Ապահովագրողը:

2.1.5. Մպասարկող ընկերության որոշմամբ՝ հույժ անհրաժեշտության դեպքում, որը որոշում է միայն բուժող բժիշկը, Ապահովագրված անձին կարող են մատուցվել թարգմանչի ծառայություններ:

2.1.6. Ապահովագրողը երաշխավորում է սուր ատամնացավի առաջացման դեպքում և դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների դեպքում շտապ ատամնաբուժական օգնության վճարում, սակայն Ապահովագրողի պատասխանատվության գումարը ատամնաբուժական մեկ ապահովագրական պատահարի գծով բոլոր այցերի համար չի կարող գերազանցել 250(երկու հարյուր հիսուն) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամը՝ բուժօգնության վճարումը կատարելու օրվա դրությամբ ՀՀ ԿԲ հրապարակված փոխարժեքով:

## 2.2. ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԾԱԽՍԵՐ

2.2.1. Եթե Ապահովագրված անձը Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով մարմնական վնասվածքներ է ստացել կամ հանկարծակի հիվանդացել է և/կամ ենթակա է մեկուսացման/կարանտինի, ապա Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձի տեղափոխման/մեկուսացման համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը և վճարումը հետևյալ դեպքերում.

ա) Ապահովագրված անձի տեղափոխում դեպքի վայրից մոտակա հիվանդանոցներից մեկը:

բ) Անհրաժեշտության դեպքում Ապահովագրված անձի տեղափոխում անհրաժեշտ ցանկացած միջոցով (ներառյալ, սանիտարական մեքենան, չվերթային ինքնաթիռը, սանիտարական ինքնաթիռը, բայց չսահմանափակվելով նշված փոխադրամիջոցներով) դեպի հիվանդանոց, որն ունի համապատասխան սարքավորումներ՝ ստացված մարմնական վնասվածքների կամ հիվանդության բուժման համար: Սույն կետով նախատեսված տեղափոխումը կարող է իրականացնել Մպասարկող ընկերությունը կամ հիվանդանոցի անձնակազմը՝ անպայման տեղեկացնելով Մպասարկող ընկերությանը:

գ) համապատասխան բժշկական ուղեկցությամբ Ապահովագրված անձի էվակուացում վերջինիս մշտական բնակության վայրի օդանավակայանին ամենամոտ գտնվող հիվանդանոց, որի հետ առկա է ուղիղ միջազգային հաղորդակցում, եթե նրա վիճակը թույլ է տալիս նման էվակուացում: Բուժհաստատությունն ու բուժող բժիշկը պետք է որոշեն՝ արդյոք Ապահովագրված անձի վիճակը թույլ է տալիս նրան էվակուացնել հասարակ ուղևորի նման, թե անհրաժեշտ են հատուկ նախապատրաստական միջոցառումներ (հարմարանքներ, միջոցներ): Սույն կետով նախատեսված տեղափոխումը կարող է իրականացնել միայն Մպասարկող ընկերությունը:

2.2.2. Վերոնշյալ կետի Բ և Գ ենթակետերով նախատեսված դեպքերում տեղափոխության հետ կապված ծախսերի վճարումն իրականացնում է միայն Մպասարկող ընկերությունը:

## 2.3. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ

2.3.1. Ապահովագրված անձի մահվան դեպքում Ապահովագրողը երաշխավորում է վճարել հանգուցյալի հայրենադարձման և դիախերձման, միջազգային տեղափոխությանը համապատասխանող դագաղի, ինչպես նաև մահացածի մշտական բնակության երկրում նախատեսված հուղարկավորության վայրին ամենամոտ օդանավակայան (որի հետ առկա է ուղիղ միջազգային օդային հաղորդակցում) դիակի տեղափոխության համար նախատեսված ծախսերը:

2.3.2. Հայրենադարձման կազմակերպումը և նշված ծախսերի վճարումն իրականացնում է միայն Սպասարկող ընկերությունը:

#### 2.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

##### 2.4.1. ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ԱՅՑԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

Եթե Ապահովագրված անձի առողջական վիճակը բուժող բժշկի կարծիքով կրիտիկական է, Ապահովագրողը երաշխավորում է Հարազատի այցի համար երկկողմանի էկոնոմ կարգի տոմսի արժեքի վճարում:

##### 2.4.2. ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ

Հարազատի հանկարծամահության դեպքում Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձի վաղաժամկետ վերադարձի կազմակերպում և վճարում այն դեպքում, երբ Ապահովագրված անձը վերադարձնում է վերադարձի չօգտագործված տոմսը (կամ նրա արժեքը) Ապահովագրողին կամ Սպասարկող ընկերության ներկայացուցչությանը:

##### 2.4.3. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷՎԱԿՈՒԱՑՈՒՄ

2.4.3.1. Եթե Ապահովագրված անձի հետ պատահած դժբախտ պատահարի կամ հիվանդության հետևանքով նրա հետ ճանապարհորդող անչափահաս երեխաները մնացել են առանց խմանակալի, Ապահովագրողը երաշխավորում է նրանց տուն վաղաժամկետ վերադառնալու կազմակերպում և վճարում:

2.4.3.2. Անչափահաս երեխաների վերադառնալու կազմակերպումը և վճարումը իրականացնում է Սպասարկող ընկերությունը:

2.4.3.3. Եթե անչափահաս երեխաների վերադառնալու կազմակերպումը և վճարումը իրականացնում է նրանց շահերը ներկայացնող անձը՝ Սպասարկող ընկերությանը նախապես տեղեկացմամբ, ծախսերի հատուցումը հայրենիքում իրականացնում է Ապահովագրողը:

#### 2.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.5.1. Սույն բաժնով ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասն այն իրադարձության արդյունքում, որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի կողմից արտասահմանում գտնվելու ընթացքում, երբ այդպիսի վնաս պատճառելու հանգամանքը առաջացնում է Պայմանագրով հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորություն:

2.5.2. Երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու փաստը պետք է հաստատված լինի դատական որոշմամբ կամ Ապահովագրված անձին պաշտոնապես ներկայացված գույքային պահանջով:

2.5.3. Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրական պատահարի առաջացմանը հանգեցրած ցանկացած իրադարձության նկատմամբ, բացի այն դեպքերից, որոնք նշված են Պայմանագրի Բացառություններ բաժնում:

2.5.4. Մինևույն պատճառից ծագած, հերթականությամբ կամ միաժամանակ ի հայտ եկած մի շարք իրադարձությունների ազդեցության արդյունքում մի քանի անձանց վնասի պատճառումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար: Այդպիսի իրադարձությունների արդյունքում ներկայացված վնասի հատուցման բոլոր պահանջները կհամարվեն ներկայացված այն պահին, երբ Ապահովագրված անձի նկատմամբ ներկայացվել է այդ պահանջներից առաջինը:

2.5.5. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու կապակցությամբ ի հայտ եկած Ապահովագրողի պարտավորությունները ներառում են հետևյալ պահանջների բավարարման պարտավորությունները. դատարանի որոշմամբ բավարարված և/կամ Ապահովագրողին ներկայացված հիմնավորված, այսինքն՝ ապահովագրության տարածքում գործող

քաղաքացիական օրենսդրության համաձայն հատուցման ենթակա, երրորդ անձանց պահանջները Ապահովագրված անձի նկատմամբ.

- երրորդ անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասը հատուցելու մասին (անձնական վնաս),
- երրորդ անձանց գույքին պատճառված վնասը հատուցելու մասին (գույքային վնաս):

## 2.6. ՎԱՐՉԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.6.1. ՈՒՂԵԲԵՌՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԱՅԼ ՀԱՍՑԵՈՎ

2.6.1.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված իրեն պատկանող ուղեբեռի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ: Ուղեբեռի տակ հասկացվում են Ապահովագրված անձի՝ ուղևորության ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փոխադրվող անձնական իրերը. ինչպես փոխադրող կազմակերպությանը հանձնած ուղեբեռն, այնպես էլ ձեռքի ծանրոցը:

2.6.1.2. Եթե ուղեբեռը կորել է Ապահովագրված անձի կողմից չվերթային տրանսպորտից օգտվելու ընթացքում, Ապահովագրողը միջոցառումներ կձեռնարկի ուղեբեռը շուտ վերադարձնելու համար:

2.6.2. ՇՏԱՊ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձին կամ նրա շահերը ներկայացնող անձին Ապահովագրական պատահարի հետ կապված շտապ հաղորդագրությունների ուղարկման հնարավորության ապահովումը Սպասարկող ընկերությանը դիմելու պահից 24 ժամվա ընթացքում:

### 2.6.3. ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՐՄՏԻ ԿԱՄ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձին օգնություն ցուցաբերել կորած փաստաթղթերի (անձնագրի և չվերթային տրանսպորտի տոմսերի) փոխարեն նոր կամ ժամանակավոր փաստաթղթերի ստացման համար անհրաժեշտ հայտերի ձևակերպման և դրանց առաքման կազմակերպման մեջ:

### 2.6.4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

2.6.4.1. Եթե անհրաժեշտության դեպքում ապահովագրված անձն ի վիճակի չէ ինքնուրույն կապ հաստատել իրավաբանի հետ, Ապահովագրողը երաշխավորում է նման կապի հնարավորության ընձեռում՝ Ապահովագրված անձի կողմից իրավաբանի ծառայությունների համար ինքնուրույն վճարելու պայմանով:

2.6.4.2. Եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել երրորդ անձի մեղքով, Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձին իրավաբանական օգնություն ցուցաբերել նրա իրավունքները պաշտպանելու հետ կապված գործ հարուցելու ընթացքում:

## 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է նախքան ճանապարհորդության սկիզբը: Ճանապարհորդության սկզբի ամսաթվից ուշ տրված Պայմանագրերը անվավեր են համարվում:

3.2. Ապահովագրության Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը գրավոր կամ բանավոր դիմում է Ապահովագրողին (նրա լիազոր ներկայացուցչին, գործակալին) և հայտնում է ապահովագրության Պայմանագիր կնքելու իր մտադրության մասին՝ նշելով հետևյալ տվյալները՝

3.2.1. Ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովադրի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան ամսաթիվը, գրանցման և մշտական բնակության հասցեն և հեռախոսահամարը,

- 3.2.2. Իրավաբանական անձի դեպքում՝ Ապահովադրի անվանումը, պետ.ռեգիստրի գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական և փաստացի գործունեության հասցեն, հեռախոսը և բանկային վավերապայմանները,
- 3.2.3. Ապահովագրված անձի (անձանց) անունն, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան ամսաթիվը, անձնագրի տվյալները, գրանցման և մշտական բնակության հասցեն և հեռախոսահամարը,
- 3.2.4. Ճանապարհորդության մեջ գտնվելու ծրագրավորված ժամանակահատվածի սկիզբը և ավարտը,
- 3.2.5. Այն երկրները, որոնց տարածքում գործելու է ապահովագրության Պայմանագիրը,
- 3.2.6. Ուղևորության նպատակը,
- 3.2.7. Մասնագիտությունը և ճանապարհորդության ընթացքում իրականացվելիք գործունեության բնույթը, եթե ուղևորության նպատակն աշխատանքն է,
- 3.2.8. Ապահովագրության ծրագիրը,
- 3.3. Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է առանց Ապահովագրված անձի բժշկական արձանագրության: Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է լրացնի հարցաթերթիկ:
- 3.4. Ապահովագրության պայմանագրի կնքման փաստը հաստատվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրին հանձնվող ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով և դրան կցված սույն ապահովագրության Պայմաններով:

#### 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Ապահովագրության Պայմանագիրն կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի համար, սակայն ոչ պակաս քան 3 (երեք) օրյա ժամկետով և ոչ ավել, քան 1 (մեկ) տարի ժամկետով՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով:
- 4.2. Եթե ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության Պայմանագրով նախատեսված են Ապահովագրված անձի բազմաթիվ ուղևորություններ, ապա Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն Պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի համար:
- 4.3. Ապահովագրության Պայմանագրով սահմանված տարածք Ապահովագրված անձի կատարած յուրաքանչյուր ուղևորության ժամանակ Ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի քանակն ավտոմատ կերպով պակասեցվում է ապահովագրության Պայմանագրով սահմանված տարածքում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է ապահովագրության Պայմանագրով սահմանված օրերի քանակի սպառմամբ:
- 4.4. Ապահովագրության տարածք է հանդիսանում ողջ աշխարհը:
- 4.5. Պայմանագրի շրջանակներում ՀՀ-ում և ԼՂՀ-ում գտնվելն օտարերկրյա քաղաքացի հանդիսացող Ապահովագրված անձանց համար ճանապարհորդություն չի հանդիսանում: 4.6. Ապահովագրողն իրավունք ունի որոշում կայացնել 65 տարեկանից բարձր, I կամ II կարգի հաշմանդամություն ունեցող անձանց Պայմանագրի շրջանակներում հատուկ պայմաններով ապահովագրելու մասին (ապահովագրավճարի վերահաշվարկմամբ, որը լրացուցիչ սահմանվում է Ապահովագրողի կողմից հաշվարկված համեմատաբար բարձր գործակիցներով):
- 4.7. Ապահովագրության Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի գործողության տարածքի սահմանն անցնելու պահից, սակայն Պայմանագրում նշված գործողության ժամկետից ոչ շուտ՝ ապահովագրավճարն ամբողջովին վճարելու դեպքում և գործում է մինչև Պայմանագրում նշված ժամկետի ավարտը:
- 4.8. Եթե Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի մոտենալու պահին Ապահովագրված անձի ճանապարհորդությունից վերադարձը հնարավոր չէ ապահովագրական պատահարով պայմանավորված վերջինիս հոսպիտալացման պատճառով, որը հաստատվում է

համապատասխան բժշկական արձանագրությամբ, Ապահովագրողը կատարում է սույն Պայմանագրի 6-րդ բաժնում նախատեսված և տվյալ պատահարով պայմանավորված իր պարտականությունները առավելագույնը լրացուցիչ 4 (չորս) շաբաթվա ընթացքում՝ հաշված ապահովագրության Պայմանագրում որպես ապահովագրության ավարտի ամսաթիվ սահմանված օրվանից:

4.9. Պայմանագրի և սույն Պայմանագրերը վերաբերում են աջակցության ապահովագրության դասին՝ համաձայն ՀՀ օրենսդրությանը:

## **5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ**

5.1. Ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

5.2. Ապահովագրավճարը վճարվում է միանվագ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, ապահովագրության ամբողջ ժամանակահատվածի համար, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով:

5.3. Կողմերի համաձայնությամբ ապահովագրավճարը կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Ապահովագրավճարը սահմանվում է արտարժույթով և վճարվում է ՀՀ դրամով, տվյալ օրվա համար ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով, եթե կողմերի համաձայնությամբ այլ փոխարժեք սահմանված չէ:

5.4. Եթե ապահովագրավճարն ապահովագրության Պայմանագրով սահմանված պայմաններով չի վճարվել, ապա ապահովագրության Պայմանագրի համարվում է ուժի մեջ չմտած և չի առաջացնում որևէ հետևանք կողմերի համար, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.5. Սույն Պայմանագրերով քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում ընդհանուր ապահովագրական գումարը սահմանվում է 10 000 (տաս հազար) ԱՄՆ դոլլարին համարժեք, իսկ մեկ ապահովագրական պատահարի համար՝ 5 000 (հինգ հազար) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամ, եթե ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.6. Սույն Պայմանագրերով ուղեբեռի ամբողջական կորստի ժամանակ առավելագույն ապահովագրական գումարը յուրաքանչյուր պատահարի գծով սահմանվում է 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամ (հաշվարկված ուղեբեռի կորստի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով) ուղեբեռի ամբողջական կորուստը հաստատող փաստաթղթերը կորստից հետո 1 (մեկ) ամսյա ժամկետում ներկայացնելու դեպքում:

## **6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ**

Պայմանագրի պայմաններին համապատասխան հատուցման են ենթակա հետևյալ ծախսերը. 6.1. Բժշկական ծախսեր, մասնավորապես՝

6.1.1. Բժշկական կենտրոնում գտնվելու և ստացիոնար բուժման (ստանդարտ պալատային պայմաններում), ներառյալ բժշկական ծառայությունների, վիրահատությունների, դիագնոստիկ հետազոտությունների, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապային և անշարժացնող միջոցների (գիպս, բանդաժ) հետ կապված ծախսերը:

6.1.2. Ամբուլատոր բուժման, ներառյալ բժշկական ծառայությունների, դիագնոստիկ հետազոտությունների, բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապային և անշարժացնող միջոցների ծախսերը:

6.2. Տրանսպորտային ծախսեր՝

6.2.1. Եթե միայնակ ճանապարհորդող Ապահովագրված անձի հիվանդանոցում գտնվելու ժամանակը գերազանցում է 20 (քսան) օրը, ապա Ապահովագրողը ծածկում է Ապահովագրված անձի բարեկամներից մեկի երկկողմանի ուղղությամբ (մշտական բնակության վայրի հետադարձով) էկոնոմ կարգի տոմսերի ծախսը:

6.2.2. Բարեկամի՝ արտերկրում գտնվելու ծախսերն Ապահովագրողը չի հոգում:



### 6.3. Վարչական օգնության տրամադրման հետ կապված ծախսեր՝

6.3.1. Ուղեբեռի կորստի դեպքում ապահովագրական գումարը փոխհատուցվում է ուղեբեռի իրական արժեքի չափով, բայց չի կարող գերազանցել սույն Պայմանագրով սահմանված 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամ (հաշվարկված ուղեբեռի կորստի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով):

6.3.2. Եթե կորած ուղեբեռի համար Ապահովադիրը երրորդ անձանցից ստացել է հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական գումարի և հատուցված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարներ ստանալու մասին Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

## 7. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Ապահովագրության Պայմաններով նախատեսված Ապահովագրված անձին ցուցաբերված ցանկացած տեսակի ծառայությունները հատուցման ենթակա չեն հետևյալ դեպքերում.

7.1.1. եթե Ապահովագրված անձը չի տեղեկացրել Սպասարկող ընկերությանը պատահարի, նախաձեռնած գործողությունների և իր կողմից անձամբ կրած ծախսերի մասին,

7.1.2. եթե տեղի է ունեցել ցանկացած էվակուացում, բժշկական տեղափոխում կամ հայրենադարձում, որը կազմակերպված չի եղել Սպասարկող ընկերության կողմից (կամ կատարվել է առանց Սպասարկող ընկերության հետ նախապես համաձայնեցման),

7.1.3. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ահաբեկչական ակտի, ժողովրդական հուզումների, խռովությունների, պատերազմների մեջ մասնակցության հետևանքով, Ապահովագրված անձի ռազմական ուժերում կամ կազմավորումներում ակտիվ ծառայության հետևանքով,

7.1.4. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի ձիարշավներում, մրցարշավներում, ցանկացած սպորտային մրցումներում մասնակցության հետևանքով, ինչպես նաև պրոֆեսիոնալ կամ սիրողական սպորտով զբաղվելու հետևանքով: Ապահովագրական պատահար են համարվում այն դեպքերը, երբ Ապահովագրողը ապահովագրության Պայմանագիրը կնքելու պահին տեղեկացվել է, որ Ապահովագրվող անձն ուղևորության ընթացքում զբաղվելու է սպորտով, և ապահովագրավճարը հաշվարկելու ժամանակ օգտագործվել են Ապահովագրավճարի համապատասխան բարձրացնող գործակիցներ,

7.1.5. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ցանկացած տեսակի վճարովի աշխատանք կատարելու ընթացքում,

7.1.6. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողություններ կատարելու հետևանքով,

7.1.7. եթե Ապահովագրված անձը մարմնական վնասվածքներ է ստացել ալկոհոլի, թմրանյութերի կամ ցանկացած այլ տեսակի արբեցնող միջոցների ազդեցության ներքո,

7.1.8. եթե դժբախտ պատահարի կամ հիվանդության հետ կապված ծախսերը տեղի են ունեցել մինչև ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը կամ դրա լրանալուց հետո և/կամ մշտական բնակության երկիր վերադառնալուց հետո,

7.1.9. եթե ծախսերը կապված են բարոյական վնասի հատուցման հետ,

7.1.10. եթե Ապահովագրված անձը չի պահպանել վարակիչ հիվանդությունների պրոֆիլակտիկայի միջազգային բժշկական պահանջները,

7.1.11. եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների կարանտինի պատճառով:

7.2. Հատուցման ենթակա չեն այն վնասները և/կամ ծախսերը, որոնք առաջացել են կամ կապված են հետևյալ վնասների պատճառման հետևանքով առաջացած պահանջների բավարարման հետ.

7.2.1. երրորդ անձանց բաց թողնված շահույթով պայմանավորված վնաս, բացառությամբ երրորդ անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու դեպքերի,

7.2.2. երրորդ անձանց պատճառված վնաս, որը գերազանցում է ապահովագրության տարածքում գործող օրենսդրությամբ նախատեսված հատուցումների սահմանաչափերը,

7.2.3. բարոյական վնաս կամ իրավաբանական անձի գործնական հեղինակությանը պատճառված վնաս,

7.2.4. երրորդ անձանց պատճառված վնաս, որը կապված է.

ա) ծովային, գետային նավերի կամ այլ ջրային օբյեկտների հետ,

բ) ինքնաթիռների, ուղղաթիռների կամ այլ օդավարվող կամ չօդավարվող թռչող սարքերի հետ,

գ) ավտոտրանսպորտային միջոցների տիրապետման և օգտագործման հետ,

դ) ուղևորներ և բեռներ տեղափոխելու համար նախատեսված երկաթուղային գծերի, ինչպես նաև մերձատար ուղիների շահագործման կամ այլ ձևով օգտագործման հետ,

ե) վտանգավոր արտադրական օբյեկտների հետ (սույն կետը բացառություն չի համարվում համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում):

7.2.5. ապրանքների, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության թերությունների հետևանքով, ինչպես նաև ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ հավաստի կամ անբավարար տեղեկատվության հետևանքով պատճառված վնաս,

7.2.6. մշտական, պարբերական կամ երկարատև ջերմային ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, հեղուկների, խոնավության կամ մթնոլորտում առկա ցանկացած, այդ թվում՝ կախված մասնիկների (մրուրի, մրի, ծխի, փոշու և այլնի) հետևանքով առաջացած վնաս, բացառությամբ այն դեպքերի, երբ վերը նշված սուբստանցիաների ազդեցությունը հանդիսանում է հանկարծակի և անկանխատեսելի և առկա են ակնհայտ ապացույցներ, որ վնասն այդպիսի ազդեցության անխուսափելի հետևանք է և ուղղակիորեն կապված է Ապահովագրված անձի գործունեության հետ:

7.2.7. Ապահովագրված անձի կողմից կանխամտածված ձևով պատճառված վնաս,

7.2.8. Ապահովագրված անձի ամուսնու, երեխաների (այդ թվում՝ որդեգրած), ծնողների (այդ թվում՝ որդեգրողների), նրանց եղբայրների, քույրերի ու թոռների, տատիկների ու պապիկների, ինչպես նաև նրանց մոտակա հարազատների ու այլ անձանց կողմից ներկայացվող պահանջները, որոնք երկար ժամանակ ապրում են Ապահովագրված անձի հետ և նրա հետ վարում են համատեղ տնտեսություն,

7.2.9. վնաս, որը հանդիսացել է Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետի ընթացքում ապահովագրական ռիսկի աստիճանն ավելացնող հանգամանքների չվերացման հետևանք,

7.2.10. վնաս, որը հանդիսացել է Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից իր անձնական նպատակներով առևտրային կամ այլ գաղտնի տեղեկատվությունը հրապարակելու կամ օգտագործելու հետևանք՝ կապված նրա կողմից իր գործունեությունն իրականացնելու հետ,

7.2.11. վնաս, որը պատճառվել է ապահովագրության Պայմանագրում նշված տարածքի սահմաններից դուրս,

7.2.12. այն առարկաներին պատճառված վնասներ, որոնք մշակվում, վերամշակվում կամ այլ կերպ հանդիսանում են Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց կողմից իրականացվող որևէ գործողության օբյեկտ՝ նրա արտադրական կամ մասնագիտական գործունեության շրջանակներում (այդ թվում՝ արտադրանքների արտադրություն, վերանորոգում, տեղափոխում և այլ ծառայությունների մատուցում), ինչպես նաև այն աշխատանքներին վերաբերող վնասներ, որոնք իրականացվում են հենց Ապահովադրի կողմից կամ նրա հանձնարարությամբ կամ հաշվին,

7.2.13. վնասներ, որոնք առաջացել են ասբեստի, ասբեստե մանրաթելի կամ ասբեստ պարունակող ցանկացած այլ արտադրանքի, ինչպես նաև դիէթիլստիրոլի, դիոքսինի, միզանյութային ֆորմալդեհիդի ազդեցության արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

7.2.14. մարդկանց, կենդանիների և բույսերի օրգանիզմներում գենետիկական փոփոխությունների հետ կապված վնասներ,

7.2.15. վնասներ, որոնք ծագում են Ապահովադրի/Ապահովագրված անձի պարտավորությունից՝ փոխհատուցելու որևէ տեսակի մասնագիտական գործունեություն իրականացնելու արդյունքում պատճառված վնասը, որի մասով ապահովագրությունն իրականացվում է մասնագիտական պատասխանատվության ապահովագրության շրջանակներում,

- 7.2.16. վնաս, որը պատճառվել է մինչև ապահովագրության Պայմանագրի կնքման պահը և/կամ ուժի մեջ մտնելն ի հայտ եկած ցանկացած իրադարձության արդյունքում,
- 7.2.17. վնաս, որի համար հիմքերն ի հայտ են եկել մինչև ապահովագրության Պայմանագրի գործողության սկիզբը,
- 7.2.18. Ապահովագրված անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացած վնաս (բացառությամբ առողջությանը հասցված վնասի), ընդ որում՝ տվյալ բացառությունն առանց սահմանափակումների վերաբերում է Ապահովագրված անձի ինչպես գործողություններին, այնպես էլ անգործությանը, անկախ դրանց բնույթից, ծավալից և առաջացման հանգամանքներից, ինչպես նաև ցանկացած այնպիսի պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Ապահովագրված անձի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում,
- 7.2.19. Ապահովագրված անձի կողմից ցանկացած շենքի և/կամ շինության մի մասի վարձակալության մասով պարտավորություններից ծագող վնաս (բացառությամբ կյանքին կամ առողջությանը հասցված վնասի),
- 7.2.20. Ապահովագրված անձի կողմից մասնագիտական ծառայությունների մատուցման կամ մատուցման մերժման կապակցությամբ առաջացած վնաս (բացառությամբ կյանքին կամ առողջությանը հասցրած վնասի),
- 7.2.21. վնաս, որը կապված է Ապահովադրին կամ Ապահովագրված անձին պատկանող առարկաների և/կամ շինությունների վնասման, ոչնչացման կամ փչացման հետ, կամ երբ Ապահովադիրը/Ապահովագրված անձը վերցրել է դրանք վարձակալությամբ, վարձույթով, լիզինգով կամ փոխառությամբ, կամ պահպանման է ընդունել պայմանագրով կամ որպես լրացուցիչ ծառայություն,
- 7.2.22. սեռական նկրտումների, մարմնական պատժումների, գործողությամբ կամ խոսքով վիրավորելու հետևանքով ի հայտ եկած պատասխանատվության կապակցությամբ առաջացած վնասներ,
- 7.2.23. Ապահովագրված անձի կողմից արգելված, հանցավոր ճանապարհով ձեռք բերված, մաքսանենգ ապրանքների և/կամ նյութերի օգտագործման, վաճառքի, պատրաստման, առաքման, փոխանցման կամ տիրապետման արդյունքում ի հայտ եկած պատասխանատվության կապակցությամբ առաջացած վնասներ:
- 7.2.24. Ապահովադրի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց պատճառված վնաս, որը պատճառվել է աշխատանքային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ժամանակ, սակայն, եթե վնասը պատճառվում է նշված անձանց ոչ աշխատանքային ժամերին և աշխատանքային պարտավորությունները նրանց կողմից կատարելու հետ կապ չունեցող հանգամանքներում, ապա այն ենթակա է հատուցման Պայմանագրի դրույթներին համապատասխան:
- 7.2.25. Ապահովադրի կողմից ներկայացվող պահանջները Ապահովագրված անձից իրեն վնաս պատճառելու հետ կապված, կամ Ապահովագրված անձի կողմից ներկայացվող պահանջները Ապահովադրից կամ այլ Ապահովագրված անձանցից վնաս պատճառելու հետ կապված:
- 7.3. Ապահովագրության Պայմաններով նախատեսված Ապահովագրված անձի շտապ բուժօգնության ծառայությունների ցուցաբերման հետ կապված ծախսերը հատուցման ենթակա չեն հետևյալ դեպքերում.
- 7.3.1. եթե ճանապարհորդությունը նախաձեռնվել է բուժում ստանալու նպատակով,
- 7.3.2. եթե հիվանդությունն սկսվել է միջուկային, քիմիական ազդեցության կամ ռադիոակտիվ ճառագայթման ուղիղ կամ շեղ ազդեցության հետևանքով, ինչպես նաև ատոմային պայթյունի կամ դրա հետևանք հանդիսացող այլ հիվանդությունների հետևանքով,
- 7.3.3. եթե ծախսերը կապված են այնպիսի հիվանդությունների հետ, որոնք վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում մինչև ապահովագրության ժամկետի սկսվելը բուժում կամ ատամնաբուժական օգնություն են պահանջել (սահմանափակումը չի գործածվում, եթե բուժօգնությունը ցուցաբերվել է կյանքը փրկելու նպատակով),

- 7.3.4. եթե ծախսերը կապված են բուժման կուրսի հետ, որն սկսվել է մինչև ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և շարունակվել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, կամ եթե տվյալ ճանապարհորդությունը նախաձեռնվել է՝ հաշվի չառնելով ճանապարհորդության համար բժշկի հակացուցումները,
- 7.3.5. եթե Ապահովագրված անձին էվակուացրել են այն դեպքում, երբ հիվանդությունները կամ վնասվածքները չնչին են, ենթարկվում են տեղական բուժման և չեն խոչընդոտում Ապահովագրված անձի ճանապարհորդության շարունակմանը,
- 7.3.6. Եթե ծախսերը կապված են հղիության ընթացքում խորհրդատվության, հետազոտությունների և հղիության բարդությունների բուժման հետ, հղիության արհեստականորեն ընդհատման հետ, անկախ հղիության տևողությունից, ինչպես նաև ծննդաբերության և հետծննդաբերական վերահսկողության իրականացման, բացի այն դեպքերից, երբ բժշկական օգնությունը անհրաժեշտ է կյանքի պահպանման տեսանկյունից:
- 7.3.7. եթե ծախսերը կապված են բնածին անոմալիաների և հոգեկան խանգարումների հետևանք հանդիսացող նյարդային, հոգեկան հիվանդությունների և դրանց սրացումների հետ, ռելապսիայի և այնպիսի վիճակների հետ, որոնք դեռ չեն հավասարակշռվել և բուժման են ենթարկվել մինչև մեկնելու օրը, և որոնց հետ կապված առկա է վատթարացման իրական վտանգ,
- 7.3.8. եթե ծախսերը կապված են քրոնիկ հիվանդությունների և դրանց սրացումների հետ, բացի այն դեպքերից, երբ բժշկական օգնությունը անհրաժեշտ է կյանքի պահպանման տեսանկյունից,
- 7.3.9. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի ինքնասպանության, ինքնասպանության փորձի, կանխամտածված անդամախեղության, կանխամտածված քայլերի հետևանքով,
- 7.3.10. եթե ծախսերը կապված են վեներական հիվանդությունների, ՁԻԱՀ-ի կամ ցանկացած նմանատիպ համախտանիշի հետ,
- 7.3.11. եթե ծախսերը կապված են ուռուցքաբանական հիվանդությունների հետ,
- 7.3.12. եթե դժբախտ պատահարն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է Ապահովագրված անձի ալկոհոլային, տոքսիկ, թմրանյութային կամ այլ տեսակի հարբեցման հետ,
- 7.3.13. եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից թոչող ապարատ վարելու ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով,
- 7.3.14. եթե ծախսերը կապված են ցանկացած տեսակի պրոթեզավորման հետ՝ ներառյալ ատամնայինը և ակնայինը,
- 7.3.15. եթե բժշկական հետազոտությունների և խնամքի ծախսերը կապված չեն հանկարծակի հիվանդության կամ վնասվածքի հետ,
- 7.3.16. եթե ծախսերը կապված են բուժավերականգնողական թերապիայի կամ ֆիզիոթերապիայի հետ,
- 7.3.17. եթե ծախսերը կապված են կոսմետիկ կամ պլաստիկ վիրաբուժության հետ,
- 7.3.18. եթե ծախսերը կապված են հիվանդանոցի, բժշկի կամ բուժքրոջ կողմից մատուցված ծառայությունների հետ, որոնք պարտադիր չեն ախտորոշման և բուժման համար,
- 7.3.19. եթե ծախսերը կապված են պրոֆիլակտիկ վակցինացման, ախտահանության, բժշկական փորձաքննության անցկացման հետ,
- 7.3.20. եթե բուժումն իրականացրել են Ապահովագրված անձի հարազատները,
- 7.3.21. եթե ծախսերը կապված են բուժօգնության միջոցների գնման և վերանորոգման հետ,
- 7.3.22. եթե ծախսերը կապված են առողջարաններում և հանգստյան տներում հանգստանալու հետ,
- 7.3.23. եթե ծախսերը կապված են բուժման և ախտորոշման այնպիսի մեթոդների հետ, որոնք որոշված չեն ԵՏՀ անդամ երկրների հասարակական պաշտպանության համակարգով,
- 7.3.24. եթե ծախսերը կապված են անգիոգրաֆիկ, ինչպես նաև սրտի և անոթների վիրահատության հետ, այդ թվում՝ անգիոպլաստիկան և շունտավորումը, նույնիսկ եթե դրանց անցկացման համար առկա են բժշկական ցուցումներ,
- 7.3.25. եթե ծախսերը կապված են արևային այրվածքների և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ մաշկի կտրուկ փոփոխությունների բուժման հետ,

- 7.3.26. եթե ծախսերը կապված են ատամնաբուժական օգնության տրամադրման հետ, բացառությամբ շտապ ատամնաբուժական օգնության հետ կապված ծախսերի,
- 7.3.27. եթե ծախսերը կապված են հավելյալ հարմարությունների տրամադրման հետ, այդ թվում՝ «Լյուքս» պալատի, հեռուստացույցի, օդափոխիչ սարքի, վարսավիթի, մերսողի և այլ նմանատիպ ծառայությունների հետ,
- 7.3.28. եթե ծախսերն ի հայտ են եկել Ապահովագրված անձի հիմնական բնակության երկիր վերադառնալուց հետո, ինչպես նաև ապահովագրության Պայմանագրի գործողության ավարտից հետո,
- 7.3.29. Եթե ծախսերը կապված են այնպիսի ծառայությունների մատուցման հետ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտություն չեն ներկայացնում, կամ այնպիսի բուժման հետ կապված ծախսերը, որոնք բժշկի կողմից չեն նշանակվել,
- 7.3.30. եթե ծախսերն առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում բժշկին դիմելու և նրա կողմից կատարված նշանակումներից Ապահովագրված անձի ինքնակամ հրաժարվելու հետևանքով,
- 7.3.31. Ոչ ավանդական մեթոդներով բուժման ծախսեր,
- 7.3.32. եթե ծախսերն առաջացել են համապատասխան լիցենզավորում չունեցող բժշկական հաստատության կամ բժշկական գործունեություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու հետևանքով,
- 7.3.33. սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և դրանց հետևանքների բուժման ծախսեր,
- 7.3.34. Սահմանված ապահովագրական գումարները գերազանցող ծախսերը:
- 7.4. Ապահովագրված անձի կողմից Սպասարկող ընկերության իրավաչափ կարգադրությունները կատարելուց չհիմնավորված կերպով հրաժարվելու դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրության Պայմանագրով նախատեսված ծախսերի հատուցումն իրականացնելու պարտականությունից:

## **8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊԶՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 8.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է.
- 8.1.1. նախքան բժշկական հաստատությունն այցելելը կամ դիմելը՝ անհապաղ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու պահից 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես պատահարի մասին տեղեկացնել Սպասարկող ընկերությանը և հայտնել պատահարի մանրամասները, Պայմանագրում կամ անհատական քարտում նշված հեռախոսահամարներով և հայտնել հետևյալ տեղեկությունները՝
- Ապահովագրված անձի անուն, ազգանուն,
  - «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ի անվանումը,
  - Ապահովագրության Պայմանագրի համարը,
  - Անհրաժեշտ օգնության բնույթը,
  - Գտնվելու վայրը և հետադարձ կապի հեռախոսահամարը:
- 8.1.2. խստորեն հետևել Սպասարկող ընկերության օպերատորի համապատասխան ցուցումներին բժշկական օգնությունը ստանալու դեպքում,
- 8.1.3. ներկայացնել ապահովագրության Պայմանագրի բնօրինակը բժշկական անձնակազմին, 8.1.4. հետևել բժշկի նշանակումներին և բժշկական հաստատության կողմից սահմանված կարգուկանոնին,
- 8.1.5. հետևել Սպասարկող ընկերության օպերատորի ցուցումներին և համաձայնեցնել իր գործողությունները,

8.1.6. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Սպասարկող ընկերության հետ կապվելու անհնարինության դեպքում, դա անել առաջին իսկ հնարավորության ժամանակ և ներկայացնել ապահովագրության Պայմանագիրը, ընդ որում երրորդ անձանց կողմից առաջարկվող կամ արդեն իսկ մատուցված ծառայությունների համար՝ չկատարելով որևէ վճարում առանց Սպասարկող ընկերության օպերատորի համաձայնության:

8.1.7. Վճարել չհատուցվող գումարը, եթե այդպիսին նախատեսված է ապահովագրության Պայմանագրով,

8.1.8. Եթե ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետը գերազանցում է ապահովագրված օբյեկտի քանակն, ապա Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողին փաստաթղթորեն ապացուցել, որ բժշկական օգնության և/կամ բժշկական հաստատություն տեղափոխման համար դիմելու պահին ապահովագրության ժամկետն ավարտված չի եղել՝ ներկայացնելով անձնագիրը, որտեղ սահմանապահ մարմինների կողմից կատարվել են սահմանը հատելու վերաբերյալ համապատասխան նշումներ,

8.1.9. ներկայացնել Ապահովագրողին գրավոր բացատրություն և համապատասխան հաստատող փաստաթղթեր սույն Պայմանների 8.1.1 կետի պահանջները չկատարելու դեպքում :

8.2. Ապահովագրողը կամ Սպասարկող ընկերությունը կազմակերպում են Ապահովագրված անձին անհրաժեշտ և ապահովագրության Պայմանագրով նախատեսված բժշկական, բժշկական հաստատություն տեղափոխման և այլ ծառայությունների անվճար հիմունքներով տրամադրում տեղեկությունն ստանալուց հետո, իսկ Ապահովագրողը սույն Պայմանների 6-րդ բաժնով սահմանված կարգով վճարում է Սպասարկող ընկերությանը վերջինիս կողմից Ապահովագրված անձին մատուցված ծառայությունների համար:

8.3. Ապահովագրված անձի կրած ծախսերը հատուցման ենթակա չեն սույն Պայմանների 8.1 և 8.2 կետերը խախտելու դեպքում:

8.4. Ապահովագրված անձը կարող է բժշկական ծառայություններ ստանալու համար դիմել իր նախընտրած բժշկական հաստատությանը՝ պայմանով, որ այդ մասին նախօրոք պարտավորվում է տեղեկացնել Սպասարկող ընկերությանը և ստանալ վերջինիս համաձայնությունը:

8.4.1. Վերոնշյալ կետով Սպասարկող ընկերությունը տալիս է իր համաձայնությունը, եթե Ապահովագրված անձի նախընտրած բժշկական հաստատության կողմից մատուցվող ծառայությունները համապատասխանում են բուժման իրականացման ընդունված միջազգային չափանիշներին, հաստատությունն ունի համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիա (թույլտվություն), և բժշկական ծառայությունների համար գանձումները ողջամիտ են և համապատասխանում են սովորաբար ընդունված վճարների չափին:

8.4.2. Այս դեպքում Ապահովագրված անձն ինքնուրույն է վճարում մատուցված ծառայությունների դիմաց և հատուցումն իրականացվում է 8.5 և 8.6 կետին համապատասխան:

8.5. Ինքնուրույն բժշկական ծախսերի վճարման դեպքում, ճանապարհորդությունից վերադառնալուց հետո Ապահովագրված անձը կատարած ծախսերի դիմաց հատուցում ստանալու նպատակով Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝

8.5.1. Ապահովագրության Պայմանագիր,

8.5.2. պատահարի մասին գրավոր դիմում՝ Սպասարկող ընկերություն չդիմելու վերաբերյալ հիմնավոր պատճառաբանմամբ,

8.5.3. բժշկական փաստաթղթեր, որոնք պարունակում են տեղեկատվություն բժշկական եզրակացության, Ապահովագրված անձի դիմելու ամսաթվի և առողջական վիճակի, բժշկական օգնության և տևողության վերաբերյալ,

8.5.4. բժշկի կողմից լաբորատոր հետազոտությունների անցնելու նպատակով տրված ուղեգրի բնօրինակը և տրամադրված ծառայությունների գները՝ յուրաքանչյուր ծառայության համար առանձին նշված գնով և ամսաթվերով,

8.5.5. բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսերը և ձեռքբերված դեղամիջոցների դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթերը, որոնք կապված են տվյալ հիվանդության հետ,

8.5.6. մատուցված ծառայությունների համար բժշկական հաստատության կողմից տրամադրված հաշիվ-ապրանքագրի բնօրինակը, որը պետք է ներառի Ապահովագրված անձի ազգանունը, բժշկական եզրակացությունը, բուժօգնության համար դիմելու ամսաթիվը, բուժման տևողությունը, տրամադրված ծառայությունների ցանկը՝ դասակարգված ըստ գնի և տևողության, ծառայությունների ընդհանուր արժեքը,

8.5.7. Դեղամիջոցների, բուժման և այլ ծառայությունների համար կատարած վճարումները հավաստող փաստաթղթեր:

8.6. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության դեպքում հատուցման վճարման համար Ապահովադիրը պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

8.6.1. ապահովագրության Պայմանագիրը,

8.6.2. փորձագիտական հանձնաժողովի կողմից կազմված ապահովագրական պատահարի արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասի պատճառների և հնարավոր հետևանքների մասին տեղեկատվություն պարունակող վթարային հավաստագիր,

8.6.3. դատական որոշումը, որը պարունակում է տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով հատուցման ենթակա գումարի չափը, որը ներառված է Ապահովագրողի պատասխանատվության ծավալի մեջ,

8.6.4. Ապահովագրողին ներկայացված հայցերը՝ կապված տեղի ունեցած իրադարձության հետ,

8.6.5. այլ առկա փաստաթղթեր, որոնք պարունակում են տվյալ ապահովագրական պատահարի մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

8.7. Ապահովագրողը, Ապահովագրված անձի համաձայնությամբ, իրեն իրավունք է վերապահում Ապահովագրված անձի առողջության վերաբերյալ կատարել հարցումներ և ստանալ տեղեկատվություն Ապահովագրված անձի առողջական վիճակի գնահատման նպատակով:

8.8. Ապահովագրված անձի կատարած ծախսերի հատուցման նպատակով Ապահովագրողն ընդունում է միայն վճարված հաշիվները: Չվճարված հաշիվների ներկայացման դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է տալ գրավոր բացատրություն:

8.9. Ապահովագրողն իրավասու է անցկացնել տրամադրված փաստաթղթերի իսկության ստուգում, հարցումներ կատարել տվյալ ապահովագրական պատահարից իրազեկ կազմակերպություններից, ինչպես նաև իրականացնել Ապահովագրված անձի բժշկական հետազոտություն Ապահովագրողի բժշկի օգնությամբ: Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները ապահովագրական հատուցման վճարումից հետո վերադարձման ենթակա չեն:

8.10. Մասսարկող ընկերություն դիմելուց կամ բժշկական հաստատության ընտրությունից հետո չի թույլատրվում միաժամանակ կատարել սույն Պայմանների 8.1 և 8.4 կետերում նշված գործողությունները:

8.11. Դիմումը և 8.5, 8.6 կետերում նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ապահովագրողին ոչ ուշ, քան ճանապարհորդությունից վերադառնալուց 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում՝ կցելով փաստաթղթերի թարգմանությունները, բացի ռուսերեն և անգլերեն լեզուներից:

8.12. Ապահովագրված անձի բժշկական տեղափոխության կամ հայրենադարձման համար պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

ա) որպեսզի Մասսարկող ընկերությունը գործելու հնարավորություն ունենա, Ապահովագրված անձը կամ նրա ներկայացուցիչը պետք է նշի.

- Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- հիվանդանոցի հասցեն և հեռախոսահամարը, որտեղ տեղավորել են Ապահովագրված անձին,
- Բուժող բժշկի անունն, ազգանունը, հասցեն և հեռախոսահամարը,

բ) Մասսարկող ընկերության կողմից նշանակված բժիշկը պետք է ազատ մուտք ունենա Ապահովագրված անձի մոտ և նրա հիվանդության պատմությանը՝ նրա տեղափոխման հնարավորությունը որոշելու համար: Եթե վերջինիս ամբողջական իրականացման համար Ապահովագրված անձը և նրան ուղեկցողները չեն ստեղծում անհրաժեշտ պայմանները, ապա

տվյալ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ծախսերի հատուցումից, գ) ցանկացած դեպքում Մպասարկոդ ընկերությունը, համաձայնեցնելով բուժող բժշկի հետ, նշանակում է տեղափոխման ամսաթիվն ու միջոցը, դ) Ապահովագրողը վճարում է Ապահովագրված անձի տեղափոխման համար և իրավունք ունի նախնական տոմսի չօգտագործված մասի կամ դրա դրամարկղային արժեքի ստացման նկատմամբ, ե) տեղափոխումն իրականացվում է շտապ օգնության մեքենայով, երկաթուղային տրանսպորտով, չվերթային մարդատար կամ սանիտարական ինքնաթիռով: Սանիտարական ինքնաթիռն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ Ապահովագրված անձի վիճակը թույլ չի տալիս օգտվել այլ տրանսպորտային միջոցներից:

## **9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **9.1. Ապահովադիրն իրավունք ունի.**

- 9.1.1. ստանալ ապահովագրական հատուցում՝ համաձայն սույն Պայմանագրով սահմանված կարգի,
- 9.1.2. Պայմանագրի կորստի դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը,
- 9.1.3. վաղաժամկետ լուծել Պայմանագիրը սույն Պայմանագրի 10.2 կետին համապատասխան՝ գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին, եթե ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

### **9.2. Ապահովադիրը պարտավոր է.**

- 9.2.1. ապահովագրության Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական ռիսկերի գնահատման համար էական նշանակություն ունեցող և իրեն հայտնի հանգամանքների, ինչպես նաև ապահովագրության տվյալ օբյեկտի գծով կնքված կամ կնքվելիք պայմանագրերի մասին,
- 9.2.2. Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած բոլոր փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են ապահովագրության տվյալ օբյեկտի ռիսկայնությունը,
- 9.2.3. վճարել ապահովագրավճարներն Ապահովագրողին՝ պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,
- 9.2.4. ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու պահից 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես պատահարի մասին տեղեկացնել Մպասարկոդ ընկերությանը: Սույն պայմանը չկատարելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել կատարած ծախսերն Ապահովագրված անձին հատուցելուց:
- 9.2.5. տեղեկացնել Ապահովագրողին բանկային վավերապայմանների, իրավաբանական և փաստացի գտնվելու վայրի, կոնտակտային հեռախոսահամարների և ֆաքսի համարների փոփոխության մասին,
- 9.2.6. Ապահովագրված անձին ծանոթացնել սույն Պայմանագրի դրույթների հետ: Նշված պարտավորությունը չկատարելու դեպքում դրա հետևանքների ռիսկը կրում է Ապահովադիրը:
- 9.2.7. Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողին պահանջի փոխանցման (սուբրոգացիայի) իրավունքը կիրառելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցման կիրառումից, կամ այդ իրավունքը կիրառելն անհնարին է դարձել Ապահովադիրի մեղքով, ապա Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու



պարտավորությունից և իրավունք ունի պահանջելու վերադարձնել արդեն իսկ վճարված հատուցման գումարը:

### 9.3. Ապահովագրված անձը պարտավոր է.

9.3.1. Հոգալ փաստաթղթերի (ապահովագրության Պայմանագրի, անձնական փաստաթղթերի, ծառայությունների վճարման հաշիվների և կտրոնների) պահպանման մասին, չփոխանցել դրանք երրորդ անձանց, վերջիններիս կողմից բժշկական օգնություն ստանալու նպատակով,

9.3.2. ապահովագրական Պայմանագրի գործողության ընթացքում մեկից ավելի ուղևորությունների դեպքում յուրաքանչյուր ուղևորությունից առաջ 3 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնել Ապահովագրողին հերթական ուղևորության մասին՝ զանգահարելով Կոորդինացիոն կենտրոնի (Հաճախորդների սպասարկման բաժնի) շուրջօրյա հեռախոսահամարով.

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի Կոորդինացիոն կենտրոնի հեռախոսահամար՝  
**+374 10 56 05 50** (շուրջօրյա<sup>1</sup>),

9.3.3. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ապահովագրական պատահարների առաջացումը կանխելու կամ առաջանալու դեպքում հետևանքները մեղմացնելու համար,

9.3.4. Ապահովագրական պատահարի դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու պահից 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես պատահարի մասին տեղեկացնել Սպասարկող ընկերությանը և հայտնել պատահարի մանրամասները ապահովագրության Պայմանագրի մեջ նշված կոնտակտային հեռախոսահամարով: Եթե Ապահովագրված անձին արդեն ցուցաբերվում է բժշկական օգնություն, ապա Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) պարտավոր է (հնարավորության դեպքում) հաղորդել Սպասարկող ընկերությանը այն բուժիաստատության վավերապայմանները, (անվանումը, հասցեն, հեռախոսահամարը), ուր ուղարկվել է Ապահովագրված անձը, կամ անձնական բժշկի անունը, նրա հեռախոսահամարը և հասցեն:

9.3.5. հետևել բուժիաստատության և բժշկի կողմից ստացված կարգադրություններին,

9.3.6. հետևել Սպասարկող ընկերության կարգադրություններին,

9.3.7. անձամբ վճարել մատուցված ծառայությունների դիմաց, եթե առկա է Սպասարկող ընկերության և/կամ Ապահովագրողի համաձայնությունը կանխիկ դրամական միջոցներով վճարում իրականացնելու վերաբերյալ:

### 9.4. Ապահովագրողն իրավունք ունի.

9.4.1. մինչև Պայմանագրի կնքումն ուսումնասիրել Ապահովագրված անձանց մասին անհրաժեշտ տեղեկատվությունը,

9.4.2. ստուգել Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից տրամադրված տեղեկատվության արժանահավատությունը իրեն հասանելի ցանկացած միջոցներով, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը,

9.4.3. Եթե Ապահովագրողի մոտ ի հայտ են գալիս հիմնավորված կասկածներ այն մասին, որ հատուցման պահանջը կեղծ է, հատուցում ստանալու համար Պայմանագրի շրջանակներում կիրառվել են խարդախ (կեղծված) միջոցներ կամ գործողություններ, Ապահովագրված անձը ներկայացրել է կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրին նախապես այդ մասին գրավոր կերպով ծանուցելով և տվյալ դեպքով չվճարել ապահովագրական հատուցում, լուծել Պայմանագիրը տվյալ անձի մասով և չվերադարձնել ապահովագրավճարը,

9.4.4. չտրամադրել ապահովագրական հատուցում Բացառություններով նախատեսված դեպքերում, ինչպես նաև դադարեցնել Պայմանագրի իր Ապահովագրված անձի մասով վերջինիս

<sup>1</sup> ՀՀ ողջ տարածքում ֆիքսված հեռախոսահամարներից զանգահարելու դեպքում զանգն անվճար է:

կողմից սույն Պայմանների 9.3 կետով նախատեսված պարտականությունների չկատարման դեպքում, եթե այդպիսի չկատարումը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել Ապահովագրողի լրացուցիչ ծախսերի: Այս դեպքում ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում:

9.4.5. մասնակի կամ ամբողջությամբ մերժել ապահովագրական հատուցման տրամադրումն այն դեպքերում, որոնք նախատեսված են Պայմանագրի պայմաններով,

9.4.6. ապահովագրական պատահարների հետ կապված տեղեկությունների վերաբերյալ հարցումներ անել իրավասու մարմիններին, բժշկական և այլ կազմակերպություններին ու հաստատություններին, որոնք տնօրինում են ապահովագրական պատահարի մասին տեղեկատվություն, ինչպես նաև ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները,

9.4.7. հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը մինչև ապահովագրական պատահարի մասին անհրաժեշտ տեղեկատվության և հաստատող փաստաթղթերի ստացումը,

9.4.8. հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովագրված անձի նկատմամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու առնչությամբ հարուցվել է քրեական գործ,

9.4.9. իրականացնել ապահովագրական հատուցման վճարման պահանջի կապակցությամբ առաջացած բոլոր միջոցառումների անցկացման նկատմամբ վերահսկողություն, իսկ Ապահովադրի համաձայնությամբ՝ նաև ղեկավարում,

9.4.10. միակողմանի լուծել Պայմանագիրը՝ ապահովագրավճարը սահմանված ժամկետներում և սահմանված կարգով չվճարելու դեպքում:

#### 9.5. Ապահովագրողը պարտավոր է.

9.5.1. ծանոթացնել Ապահովադրին Պայմանագրի պայմաններին,

9.5.2. չբացահայտել տեղեկություններ Ապահովադրի և Ապահովագրված անձանց մասին, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

9.5.3. բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին՝ դրա մասին գրավոր կերպով տեղեկացնելով Ապահովադրին/Ապահովագրված անձին,

9.5.4. վճարել ապահովագրական հատուցում համապատասխան որոշումն ընդունելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում,

9.5.5. ապահովագրական հատուցման մերժման դեպքում հիմնավորել մերժման պատճառները,

9.5.6. տեղեկացնել Ապահովադրին բանկային վավերապայմանների, իրավաբանական և փաստացի գտնվելու վայրի, կոնտակտային հեռախոսի և հեռաֆաքսի համարների փոփոխության մասին:

### 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Ապահովագրության Պայմանագիրը դադարում է՝

10.1.1. ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում (ապահովագրության Պայմանագրում կամ անհատական քարտում նշված ապահովագրության ավարտի ամսաթվի ժամը 24.00-ին ),

10.1.2. Ապահովագրողի՝ ապահովագրության Պայմանագրով սահմանված պարտականությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,

10.1.3. սույն Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.2. Ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

10.2.1. կողմերից մեկի գրավոր դիմումի հիման վրա,

10.2.1.1. եթե նախատեսված ճանապարհորդությունը չի կայանում: Պայմանների սույն կետի իրագործման համար պարտադիր է, որ Ապահովադիրը.

- այդ մասին տեղեկացնի Ապահովագրողին Պայմանագրի գործողությունը սկսելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ,
- Ապահովագրողին հետ վերադարձնի Պայմանագրի բնօրինակները,
- Ապահովագրողին ներկայացնի արտերկիր չմեկնելու հիմքերը:

10.2.1.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.2.2. կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

10.3. Պայմանագիրը կողմերից մեկի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Ապահովագրավճարի վերադարձն իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) եթե Ապահովագիրը հրաժարվում է Պայմանագրից գործողությունը սկսվելու օրվանից առաջ, ապա Ապահովագրողը վերադարձնում է Ապահովագրին վճարված ապահովագրավճարը՝ մասհանելով 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամի գործավարման ծախսեր,

բ) եթե Ապահովագիրը հրաժարվում է Պայմանագրից՝ վերջինիս գործողությունը սկսվելու (Ապահովագրողի համար հատուցման պարտավորության համար անհրաժեշտ պայմանների առաջացման, ճանապարհորդության սկսվելու) օրվանից հետո՝ ապահովագրավճարի վերադարձ տեղի չի ունենում:

10.4. Ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում ապահովագրավճարի վերադարձն իրականացվում է գրավոր ծանուցագիրն ստանալու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

10.5. Ապահովագրության Պայմանագիրն Ապահովագրի պահանջով վաղաժամկետ լուծելու դեպքում, երբ Ապահովագրի պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից ապահովագրության Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրին է վերադարձնում իր վճարած ապահովագրավճարն ամբողջությամբ:

## 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրության Պայմանագրի՝ սույն Պայմաններին չհամապատասխանելու դեպքում նախապատվությունը տրվում է ապահովագրության Պայմանագրին:

11.2. Պայմանագրից ծագող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Չնայած տվյալ Պայմանների բոլոր բացառություններին՝ կյանքին վտանգ սպառնալու իրավիճակում անհրաժեշտ է օգտագործել տուժածին պատահարից ամենամոտ հիվանդանոց շտապ տեղափոխելու կազմակերպման հետ կապված բոլոր հնարավորությունները: Դրանից հետո Ապահովագրված անձը, կամ նրան ուղեկցողները պետք է անհապաղ կապ հաստատեն Սպասարկող ընկերության շտապ օգնության Կենտրոնի հետ:

12.2. Եթե ապահովագրական պատահարի հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման հայրենիքում, Ապահովագրված անձը պետք է Ապահովագրողին ներկայացնի բոլոր փաստաթղթերը և կատարի բոլոր անհրաժեշտ ձևակերպումները, որպեսզի Ապահովագրողը հնարավորության դեպքում կարողանա իրականացնել հատուցումը համապատասխան աղբյուրներից:

12.3. Սույն Պայմանները կազմված են երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որոնց միջև տարբերությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

## 13. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի արտասահմանում ճանապարհորդության մեջ գտնվող անձանց (աջակցություն) ապահովագրության Պայմանները նախատեսում են երեք ծրագրեր՝ «Իզի» (Easy), «Կոմֆորտ»

(Comfort), «ՎԻՍՅՓԻ» (VIP): Աջակցության ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ պայմանագրում նշվում է ընտրված ծրագրի մասին: Նշված ծրագրերով ապահովագրության պայմանագիրը կնքվում է համաձայն «Արտասահմանում ճանապարհորդության մեջ գտնվող անձանց (աջակցության) ապահովագրության Պայմանների»: Յուրաքանչյուր ծրագիր նախատեսում է իր ծածկույթը:

1. «Իզի» (Easy). սույն ծրագրով տրամադրվող ծառայությունները սահմանված են աջակցության ապահովագրության պայմանների 2.1-2.3 կետերով, ինչպես նաև 2.6.2 կետով:
2. «Կոմֆորտ» (Comfort). սույն ծրագրով տրամադրվող ծառայությունները սահմանված են աջակցության ապահովագրության պայմանների 2.1-2.4, ինչպես նաև 2.6.2 և 2.6.4 կետերով:
3. «ՎԻՍՅՓԻ» (VIP). սույն ծրագրով տրամադրվող ծառայությունները սահմանված են աջակցության ապահովագրության պայմանների 2.1-2.6 կետերով:

Արտասահմանում ճանապարհորդության մեջ գտնվող անձանց (աջակցության) ապահովագրության Պայմանները նախատեսում են նաև ուղևորություն ամբողջ աշխարհ (Worldwide) «Իզի» (Easy) ծրագրով: Սույն ծրագրի ներքո Ապահովագրված անձի կողմից ձեռք բերված Պայմանագրով նախատեսված ապահովագրական ծածկույթը գործում է անսահմանափակ քանակությամբ ուղևորությունների դեպքում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ապահովագրության Պայմանագրերի գործողության ժամկետները և դրանց համապատասխան յուրաքանչյուր ուղևորության ապահովագրված օրերի քանակը:

Ապահովագրված օրերի քանակ	Պայմանագրի գործողության ժամկետ
7	15 օր
14	1 ամիս
30	6 ամիս
90	12 ամիս

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերը կարող են պայմանավորվել Պայմանագրի և սույն Պայմանների որոշ դրույթների փոփոխման/լրացման վերաբերյալ: Պայմանագրի և Պայմանների բոլոր փոփոխությունները կատարվում են գրավոր ձևով՝ կազմելով առանձին փաստաթուղթ, որը ստորագրվում է Ապահովադրի և Ապահովագրողի կողմից և հանդիսանում Պայմանագրի անբաժանելի մաս: Այդ փոփոխությունները գերակա են Պայմանների նկատմամբ:

Ապահովագրությունը գործում է աշխարհի բոլոր երկրներում, բացառությամբ.

1. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տարածքների,
2. պատերազմական դրության մեջ գտնվող երկրների,
3. այն պետությունների, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և/կամ ռազմական սանկցիաները,
4. այն տարածքների, որոնց սահմաններում Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և ճանաչվել են համաճարակների օջախներ: